№ 38 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 5

1905

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 5. № 38

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարտաւորութեան առաջ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Երէկ և այսօր. Նամակ Ստաւրօպոլից. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նամակ Պարսկաստանից. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋ

Մեզ հաղորդում են, որ Բագուից մեծ քանակութեամբ գաւառացի հայեր վերադառնում են իրանց հայրենիքը։ Նրանցից շատերը վնասվել են Բագուի աղէտի ժամանակ, միւսները գտնվում են աղէտի ծանր տպաւորութեան տակ և վճռել են վերադառնալով տուն զանազան արհեստների և առհասարակ տեղական արդիւնաբերութեան ձեռնարկելու իրանց ծննդավայրերում։ Նրանք յոյս ունեն, որ իրանց տնտեսած գումարներով, իրանց ձեռք բերած մի քանի հմտութիւններով նրանք ընդունակ կը լինեն արդիւնաւէտ գործեր կազմակերպել հայրենի անկիւններում։

Մենք, անկասկած, միայն ուրախ կարող ենք լինել, եթէ աջողվի իրագործել այն, ինչ որ ցանկանում են մեր պանդուխտները անել իրանց ծննդավայրերում։ Բայց չենք կարող չը նկատել, որ պատրաստութիւն ունեցող մարդիկ շատ չը կան նրանց մէջ։ Մենք տարիներ շարունակ խօսել ենք այն բանի մասին, որ մեր քաղաքներում խմբված գաւառացիները օգտվեն յարմար դէպքերից աւելացնելու թէ իրանց մտաւոր պաշարը և թէ ձեռք բերելու արհեստագիտական հմտութիւններ։ Սակայն իրապէս քիչ գործ էր կատարվում ցանկալի ուղղութեամբ։ Յաճախ գաւառացին քաղաքում, անձնատուր լինելով քաղաքի կենցաղավարական հակումներին, իւրացնում էր միայն շքեղ ապրելու, զուարճութիւններով օրեր անցկացնելու սովորութիւնը և չէր մտածում ձեռք բերելու աւելի կարևոր յատկութիւններ իր ծննդավայրին օգտաւէտ լինելու համար ապագայում։

Մեր պանդուխտները կարող են բարերար ազդեցութիւն ունենալ իրանց հայրենի անկիւններում և պէտք է աշխատեն օգտաւէտ տարրի դեր կատարել իրանց եղբայրակիցների համար։ Նրանք պէտք է վերադառնան իրանց տները ոչ իբրև աղաներ և արտօնեալներ, այլ իբրև կուլտուրական մշակներ, իբրև աշխարհ տեսած և գիտակցօրէն դէպի կեանքը վերաբերվող անձնաւորութիւններ։

Եթէ պանդուխտների առաջին շարքերը չեն կարողանում կատարել այն դերը, որ նրանցից պահանջվում է, պէտք է միջոցներ որոնել, որպէս զի նրանց հետևեալ շարքերը կարող լինեն փոքր ի շատէ համապատասխան գործունէութիւն ունենալ։ Պանդուխտները պէտք է նպաստեն մտցնելու գիւղերի մէջ գիրք, պարբերական թերթ, արհեստներ և գիտակցական վերաբերմունք դէպի գիւղերի հասարակական կեանքը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Կովկասեան փոխարքայութեան վերանորոգումը մեր երկրի համար, օրվայ ամենակարևոր, կենսական հարցն է։ Ամեն մէկը շատ լաւ գիտէ, թէ ինչու։ Բնութեան բարիքներով օժտված Կովկասը վերջին ութ տարիների ընթացքում այնքան տանջվել է, որ այսօր վարչական այս փոփոխութիւնը բնականաբար նկատվում է իբրև մի խոշոր եղելութիւն, որ նախ և առաջ պիտի ցոյց տայ, թէ ինչ կը լինի յետոյ։ Բարձրագոյն ըէսկրիպտը, որով կոմս Վորոնցով-Դաշկով նշանակվում է Կովկասեան փոխարքայ, արդէն շատ որոշ կերպով գծագրում է նոր փոխարքայի գործունէութեան ուղղութիւնը։ Այդ ցուցմունքներից կովկասեան բազմալեզու ազգաբնակութիւնը խորին բաւականութեամբ կը հետևեցնէ, որ նոր օրեր են բացվում մեր երկրի համար, երբ խաղաղացնող, հաշտութիւն մտցնող քաղաքականութիւնը կը լինի բարձր իշխանութեան ղեկավարող սկզբունքը։ Մենք տեսնում ենք նոյնպէս, որ Կովկասը այլ ևս սաստիկ առանձնացած, տեղական հանգամանքներից բղխող առանձին իրաւական կարգերով կառավարվող մի տեղ չի լինի Ռուսաստանում, այլ նա էլ կը հրաւիրվի մասնակցելու այն ըէֆորմներին, որոնք այսօր ամբողջ Ռուսաստանի վառ ակնկալութիւններն են կազմում։ Այս բոլորը նշանակում է, որ նորահաստատ փոխարքայութիւնը պիտի կենդանացնող գործունէութեան եղանակին դիմէ։ Իսկ կենտրոնացնելու, ստեղծագործող, բարեշինող ոգի ներշնչելու գործը հնարաւոր կը լինի, երբ նկատի կառնվեն երկրի անհրաժեշտ կարիքները։ Այս յոյսն էլ արտայայտում է տեղական մամուլը։ Ահա ինչ է գրում այդ առիթով «Бакин. Извѣстія» լրագիրը.

> Այն, ինչ որ այժմ յայտարարված է փետրվարի 28-ի ըէսկրիպտի մէջ, մինչև այժմ կազմում էր Կովկասեան հասարակութեան լաւագոյն մասի ապարդիւն ցանկութիւնը։ Մինթէ ստեղծագործող կուլտուրական աշխատանքի մասին չէր մտածում Կովկասեան հասարակութիւնը իր լաւագոյն մամուլի, իր գիւղատնտեսական կոմիտեների բերանով, երբ խնդրում էր տալ երկրին հանրամատչելի մարդասէր դպրոց, զեմստվոի ինքնավարութիւն, իրաւունք, որ ազգութիւնները ազատ կերպով կարգադրեն իրանց վիճակը, մի խօսքով իրաւունքների այն մինիմումը, առանց որի անկարելի է ոչ միայն երկրի ծաղկումը, այլ անկարելի է նոյն իսկ կուլտուրական գոյութիւն։ Եւ սակայն, երբ այն «բարեմիտ մարդիկ», որոնք այսօր հրաւիրվում են աջակցելու Կովկասեան փոխարքային, ձգտում են ցոյց տալ, թէ հասարակական ինչ կարիքներ են հասունացել, այդ ձգտումը ոչ միայն մերժվում էր, այլ նոյն իսկ համարվում էր անբարեմտութեան նշան։ Դեռ մտիկ անցեալում «զեմստվո», «երդուեալների դատարան» անթոյլատրելի էին համարվում Կովկասեան մամուլի մէջ։ Երբ ամենահամեստ փորձեր էին լինում գոնէ հեռաւոր ակնարկներով ցոյց տալ, արձանագրել երկրի ամենաէական կարիքները, այդ փորձերը կատարեալ անաջողութեան էին հանդիպում։

Եւ միանգամից, երբ հասարակութիւնը ոչ մի հնարաւորութիւն չունէր ոչ միայն բաւարարութիւն տալ իր կարիքներին, այլ և չէր կարողանում ազնիւ և անկեղծ կերպով յայտնել նրանց մասին, քանի որ բիւրօկրատիայի ամեն ինչ ճնշող ձեռքը veto էր դնում կեանքի զարգացման ամենափոքրիկ երևոյթի վրա, բնական էր, որ կեանքը շեղվեց իր ուղիղ զարգացման ճանապարհից և գնաց ուրիշ ճանապարհով։

Նախկին քաղաքականութեան աւելի լաւ և անխնայ մի քննադատութիւն չ'ը էլ կարելի գտնել, քան «Кавказъ» լրագրի պաշտօնական հաղորդագրութիւնը Գուրիայի գործերի մասին։ Թիֆլիսից հեռագիրը ամբողջ աշխարհում տարածեց այդ հաղորդագրութիւնը, որ հաստատում է, թէ ամբողջ երեք տարի գուրիացիները ջանք էին գործ դնում, որ բաւարարութիւն տրվի նրանց ամենաէական պահանջներին, բայց տեսնում էին միայն խստութիւններ, որոնք, հանգստացնելու փոխարէն, բերին հասցրին ներկայ դրութեան... Հարկաւոր եղաւ մի ամբողջ «ապստամբութիւն», որպէս զի իշխանութիւնները փոքր ինչ ուշադրութեամբ վերաբերվեն դէպի ազգաբնակութեան կարիքները։

Այո, ճիշտ որ, աւելի հեռու գնալու տեղ չը կայ, և Բարձրագոյն ըէսկրիպտը, որ տուած է կոմս Վորոնցով-Դաշկովի անունով, խաչ է դնում անցեալի վրա։

Մենք համոզված ենք, որ տեղական բոլոր լաւագոյն ոյժերը ջերմագին արձագանք կը տան այն հրաւէրին, որ կոչում է դէպի երկիրը խաղաղացնելը և ստեղծագործական աշխատանքը. բայց հասարակութիւնը այնքան յոռետես է դարձել, որ դեռ հարկաւոր է նրա մէջ յարուցանել հաւատ, տալ նրան վստահութիւն թէ անցեալի ծանր, խեղդող կօշմարը անդառնալի կերպով անցել է յաւիտենականութեան գիրկը։

Մենք էլ հաւատացած ենք, որ այդ վերակենդանութեան կարօտ են կովկասեան բոլոր ազգութիւնները։ Կեանքի տառապանքները, ճնշումները այնքան հալ ու մաշ են արել նրանց, որ նոր ըէժիմը, հասարակական ստեղծագործող ոյժերի վրա հիմնվելով, ամենքի համար կը լինէր խաղաղ ու երջանիկ կեցութեան մի գեղեցիկ տօն։

ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

(Նամակ Հին-Նախիջևանից).

Փետրվարի 26 ին

Փետրվարի 22-ին, երեքշաբթի օրը, Երևանի թեմական առաջնորդի կարգադրութեամբ Նախիջևան ժամանեց Երևանի թեմական դըպրանոցի տեսուչ՝ հ. Գարեգին վարդապետը իր հետ ունենալով Երևանցի Աբաս-Կուլի խանի որդի Բոյուք խանին։

Նոյն օրն երեկոյեան Զաֆար-Կուլի խանի տանը տեղի ունեցաւ 2 ազգերի հոգևորականների և ազդեցիկ աշխարհականների նախապատրաստական խառն ժողովը։ Ընտրվեց մի յանձնաժողով։ Վճռվեց, որպէս զի թէ հայը և թէ թուրքը միատեղ՝ մի օր մէջիթում, իսկ միւս օրը հայ եկեղեցում Բագուի անմեղ զոհերի հոգեհանգիստը կատարեն։

Այդպէս էլ եղաւ։

Չորեքշաբթի օրը տեղիս ամբողջ հայութիւնը, յանձին իր հոգևոր կազմի՝ ներկայ գտնվեց թուրքերի մէջիթը։

Տեղիս ամբողջ հայ ժողովուրդը, թուրքերի հետ եղբայրաբար կողք կողքի կանգնած, մէջիթումն է գտնվում։ Ոգևորութիւնը մեծ է...

Երկու կողմից էլ գրեթէ մի և նոյն տենդենցիաներով խօսվում են զգացված ու անկեղծ համերաշխական ճառեր, որոնց բովանդակութիւնը հայ ու թուրք տարրերի փոխադարձ համերաշխութեան, սիրոյ, համակրանքի և գնահատութեան անհրաժեշտութեան է վերաբերում։

Թուրքաց մէջիթում 2 հարևան ազգութիւններիս եղբայրական փոխադարձ սիրոյ և համերաշխութեան մասին է ճառվում։

Այդ է քարոզում թուրքերի ղազին, շէյխը ու մոլլան։

Այդ է քարոզում հայ հոգևորականը։

Զը տեսնված իրականութիւն...

Աչքներիս առաջ կատարվածները պատրանք են թէ իրականութիւն։ Բայց չէ՞ որ դարերի ընթացքում թուրքերի հետ կողք կողքի ապրելով, մի և նոյն օդից և ջրից, մի և նոյն կլիմայից ու բնութիւնից սնվելով, ու մշտապէս մի և նոյն տնտեսական ու հասարակական պայմանների մէջ գտնվելով հանդերձ—այդպիսի մի հազակի երևոյթ մինչև անգամ պատմութիւնը մեր առաջ չի բաց արել։

Հապա սա ի՞նչ երազ է։

Ուրեմն այն՝ ինչ որ դարերի ընթացքում միայն «ցանկութեան» նեղ շրջանակից չէ դուրս եկել, այն սերտ բարեկամութիւնը, և անխտիր անհատական արժանաւորութիւնը, ինչ որ մեր մէջ մինչև օրս գոյութիւն չէ ունեցել, և որը միմիայն սեփականութիւն է գիտակից ու կուլտուրական ազգերին—նշանակում է մի քանի հրեղէն բառերով մեր մէջ մտաւ։ Ուրեմն պատռվե՞ց մեր միջից տգիտութեան ու խաւարի սև քողը, չքացա՞ւ մեր միջից կրօնական անմիտ վիհը, անդունդը, որը մեզ այդքան միմեանցից մեկուսացրել ու զզուացրել է, ուրեմն այժմ մենք գիտակից եղբայրներ ենք և մի երկրի զաւակնե՞ր։ Եղբայրասիրական ձեռք ենք մեկնում միմեանց... Մէջէթում և եկեղեցում մոլլաների ու շէյխերի կողքին վարդապետ ու քահանան կանգնած, հայ ու թուրք տարրերը խորին երկիւղածութեամբ շէյխի ու վարդապետի ասածներն են լսում... զգացվում... և միահամուռ «ամէն» բղաւում...

Տէր Աստուած, այդ ինչ մոգական գաւազան է, այդ ինչ երազ է...

Բայց ո՛չ, տեսած ու լսածներս երազ չէ, այլ իրականութիւն։ Ուրեմն, ճիշտ է երևի Հերցլի ասած այն նշանաւոր ֆրազը, որ «երազը իրականութիւնից այնքան էլ հեռու չէ, ինչպէս կարծում են ոմանք։»

Մինթէ՞ նոյն երազը այստեղ չէ իրականանում, մինթէ «երէկ» մեզ ու թուրքերի համար մէջէթ ու եկեղեցի գնալ և խառն աղօթելը երազ չէր...

Իսկ «այսօր»...

Հինգշաբթի օրն էլ Նախիջևանի ամբողջ թուրք ժողովուրդն էր իր հոգևոր կազմով և դիրք ունեցող խաներով ու անձնաւորութիւններով հայոց եկեղեցին հաւաքվել։ Օրը Վարդանանց հինգշաբթին էր... Զարմանալի զուգադիպութիւն։ Անցնում է ամբողջ 15 երկար ու ձիգ դարեր Վարդանանց այդ հիասքանչ ու պատկառելի պատերազմից և ահա այսօր XX-րդ դարում, գիտութեան ու գիտակցութեան այս յաղթանակի օրերում հաւաքվում ենք նոյնպիսի անմեղ ու արդար եղբայրասպան զոհերի համար հոգեհանգիստ կատարելու... բայց տարբերութիւնը միայն նրա մէջն է, որ հայն ու թուրքը, այսինքն սպանվող ու սպանողը միատեղ են, անմեղ նահատակների հոգու փրկութեան համար աղօթում և կուրծքները ծեծում իրանց եղբայրասպան և անմիտ ոճրագործութեան համար։

Դժբաղդաբար սա էլ դառն իրականութիւն է...

Հայոց եկեղեցում նոյնպէս խօսվում են զգացված ու ոգևորված եղբայրսիրական ճառեր, ուղիղ այնպէս, ինչպէս մզկիթում...

Առանձնապէս ուշադրութեան արժանի էին շէյխ-Ֆեարիմի ասածները, որ իր շեշտով, իր պատկերաւոր և բանաստեղծական ոճով ու վարդապետական մտքերով գերազանցում էր բոլորին։ «Որքան կուզէ—վերջացրեց շէյխը—թող միգապատ ու մռայլ սև ամպերը թուխպ պատեն երկնից երեսին, թող բոպէպէս ծածկեն արեգակի պայծառ ու հզօր լոյսի փայլը։ Այդ բոլորը ժամանակաւոր են։ Կը գան ու կանցնեն սև ամպերը։ Մի՞ք յուսահատիլ, սիրելի եղբայրներ։ Մեր երկինքը պայծառ է։ Նախիջևանի հայ ու թուրք ազգերի մէջ ոչ մի սև ամպ չը կայ։ Մենք մինչև օրս եղբայրներ և հարևաններ եղել ենք և Աստուծով եղբայրներ էլ կը մնանք։ Կորչի այն «շէյթանը», որ մեր սրտերը կը պղտորէ...»։ Իսկ հազարաւոր հայ ու թուրք ամբոխը խորին երկիւղածութեամբ և պատկառանքով լսում և զգացվում էր յարգելի շէյխի զգացված և խելօք քարոզներից։

Տեսարանը վեհ էր և յուզիչ։

Ոգևորութեամբ աչքի էին ընկնում և Զաֆար-Կուլի խանի և Դարչինեանի խօսածները. խօսեցին նոյնպէս թուրքաց ղազին, մոլլան և Հ. Գարեգին վարդապետը։

Հայերը մտադիր են մի կտոր հող, որ թուրքաց մէջէթի սահմանումն է գտնվում և պատկանում է մի հայի—գնել նրանից և նուիրել մէջէթին։

Արաբ

ՆԱՄԱԿ ՍՏԱՎՐՕՊՕԼԻՑ

Փետրվարի 21-ին

Բագուի «Կարմիր Ծիծաղը» այստեղի հայերին էլ խորը սգի մէջ ձգեց, յուզեց։ Երէկ խուռն բազմութեան ներկայութեամբ հոգեհանգիստ կատարվեց անմեղ զոհերի յիշատակին. ներկայ էին մեծ թիւով հրէայ և ռուս ինտելիգենցիայի երկու սեռի ներկայացուցիչներ, ուսանողներ և այլն։ Պատարագիչ քահանան քարոզ խօսեց, շեշտելով ազգերի փոխադարձ սիրոյ և համերաշխութեան վրա և հրաւիրելով, որ այստեղի հասարակութիւնն էլ նիւթական օգնութիւն հասցնէ դժբաղդ զոհերին։

Պատարագից յետոյ, հոգեհանգստի սկզբին,

պ. Մ. Պապովեան քարոզի միտքը հակիրճ կերպով թարգմանեց ռուսերէն՝ վերջում աւելացնելով, որ ներկայ եղող յայտնի ռուս հրապարակախօս և գործիչ Ե. Վ. Աբրամով՝ Թոյլտուութիւն խնդրելով եկեղեցու միաբանութիւնից՝ ուզում է մի երկու խօսք ասել։ Այդ ժամանակ ոստիկանապետը, որ ներկայ էր երկու պրիստավի հետ, առաջ գալով՝ միջամտեց, թէ եկեղեցում չեն կարող խօսել աշխարհական մարդիկ և որ եկեղեցին քաղաքական ճառեր խօսելու տեղ չէ։ Պ. Պապովեան պատասխանեց, թէ մեր եկեղեցում կարող են խօսել նաև աշխարհական մարդիկ, միայն հոգևոր իշխանութեան ներկայացուցչի թոյլտուութեամբ։ Ոստիկանապետը խնդրեց գործակալ քահանայից, որ հոգեհանգիստն սկսեն։ Դրանով միջնադէպը վերջացաւ։

Սակայն յարգելի Ե. Վ. Աբրամով, որ տասնեակ տարիներ ճշմարտութեան և մարդասիրութեան մունետիկ է և իր համակրելի գրչով ու գործունէութեամբ լաւ յայտնի է ռուս ինտելիգենցիային, եկեղեցուց դուրս գալուց յետոյ առիթ ունեցաւ ինձ ասելու, որ նա միայն ցանկանում էր ռուսական տեսակէտից ցաւակցութիւն և համակրութիւն յայտնել հայերին՝ Բագուի անասելի արհաւիրքների առիթով։

Մխիթարվենք, որ բոլոր այն մարդիկ, որոնց ազնիւ սրտերում դեռ չէ խլացել մարդկայնութեան զգացմունքը, մեզ հետ են։ Այդպիսի լաւ մարդկանցից այստեղ էլ շատ կան։ Ապացոյց դրան այն հանգամանքը, որ Թիֆլիսի քաղաքագլուխ Քր. Վերմիշեանին տուած համակրական հեռագրի տակ բազմաթիւ ռուս ինտելիգենտներ ստորագրվեցին։

Մոռացայ ասել, որ հոգեհանգստի առիթով հեռագիր տրվեց «Рус. Вѣд.» լրագրին, որից, սակայն, տեղեկութիւն ստացանք, որ հեռագիրը չի կարող ամբողջովին տպվել։

Սալլիմեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Անոխա գիւղ, (Սուխ. շրջ.)
Փետրվարի 28 ին

Բագուի սարսափելի դէպքերը բաւականին զօրեղ ցնցում առաջացրին, մանաւանդ այստեղի թիւրքահպատակ հայերի մէջ, երևան հանելով սրանց հասած համանման աղէտի լուսանկարը։

Այստեղի հայ գաղութը, տեսնելով իրան էլ նոյն տեսակ աղէտալի վիճակից ոչ հեռու, հոգով ու սրտով միացաւ իր թշուառ ու անբախտ Բագուի եղբայրակիցների հետ, ի յիշատակ նահատակվածների մէկ օր տօն պահեց և աջակցութեամբ պ. Կասարեանի, ի միջի այլոց Տէր-Թաթուլ քահանայի, ս. Ղևոնդեանց տօնի օրը հանդիսաւոր հոգեհանգիստ կատարելով, սրտակից եղաւ նրանց հետևեալ հաւեստ նուիրատուութիւններով։ Գ. Թաթուլեան 15 ր., Տէր-Թաթուլ Կարմրեանց, Պ. Զատիկեանց, Մ. Փափազեանց, Յ. Օքսուզեանց, Ա. Մլլեանց, Ս. Մումջեանց. Ս. Սեֆերեանց, Գ. Օքսուզեանց, Ս. Մարգարեանց, Թ. Փաշեանց, Կամարեան—5 ական բուբլի. Խ. Բուխքլեանց, Խ. Գեղեանց, Յ. Սարեանց, Գ. Օքսուզեանց բ., Ս. Փաշեանց—3 ական բուբլի. Կ. Օքսուզեանց, Մ. Աւճեանց, Յ. Մոմջեանց, Ս. Փաշեանց, Պ. Քեասճեանց, Հ. Մաթոսեանց—2-ական բուբլի։ Գ. Թուփչեանց, Գ. Մարգարեանց, Յ. Գեղեանց, Ս. Օքսուզեանց, Մ. Խանիքերեանց, Կ. Սելվեանց, Ա. Օքսուզեանց, Գ. Բուլեանց, Յ. Բուխքլեանց, Յ. Թաթուլեանց, Գ. Ծատուրեանց, Յ. Ծատուրեանց, Խ. Թերզեանց, Վարվաշտեան, Ս. Սարեանց, Ն. Սալվեանց, Յ. Կուկուլեանց, Ս. Մուսալյանց, Յ. Բեասճեանց, Յ. Բուլեանց, Ղ. Մաթոսեանց, Ա. Նահալեանց, Ա. Մաթոսեանց, Ս. Փափազեանց, Կ. Մոմջեանց, տիկին Թաթուլեանց, Տ. Մոմջեանց, Ս. Կուկուլեանց, Ն. Կուկուլեանց, Ղ. Կուկուլեանց, Վ. Ծատուրեանց, Մ. Մումջեանց, Ս. Ծատուրեանց, Մ. Միսալիմեանց, Յ. Դեմոչեանց, Ս. Մլթլեանց, Ս. Ծատուրեանց, Կ. Կակուլեանց—1-ական բուբլի։ Մի քանի անձերից ու հոգեգանգստից գոյացած գանձանակից 25 բուբլի, ընդամենը 160 բուբլի։

Մ.

II

Քիշինեվ, փետրվարի 20-ին

Բագուում կատարված քստմնելի խժդժութիւններն ու եղբայրասպան ցնցող դէպքերը՝ պարզ և հասկանալի էին մեզ՝ Քիշնեցիներիս համար. նոյնպիսի արիւնոտ և սրտաճմլիկ պատկերների մէջ ականատես եղանք 1903 թ. զատկական տօներին մեր բախտակից՝ հրէայ ժողովրդի հալածման ժամանակ, որ տեղի ունեցաւ համեմատաբար աւելի թոյլ, աւելի սահմանափակ չափով... զգում ենք անողորմ, արիւնոտ եղելութեան, սարսափի ու աղէխարշ վշտի մեծութիւնը և բառ չենք գտնում ցաւը արտայայտելու. առ այժմ շտապում ենք հասցնել «Մշակի» խմբագրութեան մեր այսօրվայ հանգանակած կօպէկները միացնելու աղէտներից թշուառացած ընտանիքների համար հանգանակած նպաստին։

Նուիրատուներն են՝ ինժիներ Ա. Խաչիկեանց 5 ր., Կ. Յովհաննէսեանց 5 ր., Մ. Գորչակեանց 3 ր., Զ. Թանեանց 2 ր., Պետրոսեան 2 ր., Յ. Նազարեանց 5 ր., Бочковскій 1 ր., Ա. Նազարեանց 10 ր., Գոյլով 5 ր., Յ. Խաչատրեանց 3. ր., Ներսեսեան 50 կօպ., Յ. Ուսիկեանց 1 ր., Ն. Մուրադչեանց 5 ր., Փաբրիկանթեանց 50 կ., Մ. Փիլիֆեանց 5 ր., Գաղեանց 5 ր., Ե. Էդիկեանց 1 ր., տ. Կօլուկսա 20 կօպ., Մ. Աստուածատրեան 1., Քրիստ. Անուշ 5 ր., Մաղոյեան 50 կօպ., Կերդրոսեանց 30 կօպ., №№ 50 կօպ., Ս. Յովհաննիսեան 1 ր., Բ. աւագ քահանայ Խազանճեանց 4 ր., Յ. Գիւլխանդանեանց 3 ր., Ս. քահանայ Թաթսիզեանց 1 ր., ընդամենը եօթանասունը և հինգ բուբլի յիսուն կօպէկ։ (75 ր. 50 կ.)։

Ինժիներ Ա. Խաչիկեան
Կ. Յովհաննէսեան

III

Կաղզվանից, փետրվարի 28 ին

Բագուի աղէտից թշվառացածների ծով արտասուքներից մի կաթիլ սրբելու համար տեղիս հասարակութիւնն էլ իր լուման ուղարկում է յարգելի խմբագրութեանդ, որ է 91 ր. 14 կօպէկ և որը գոյացել է տեղիս սիրողների տուած ներկայացումից։ Փետրվարի 25-ին յիշեալ նպատակի համար ներկայացվեց «Մեծապատիւ մուրացկաններ» և Յ. Ղազարեանի «Եաղաստ» վոդէվիլը։ Բոլոր ազգերն էլ շատ սիրով վերաբերվեցին, որովհետև ստացված օգուտը անխտիր ընդհանուրին պէտք է յատկացվի, նոյն իսկ մեր թիւրք եղբայրներից էլ մասնակցողներ եղան, որ առաջին անգամն է։ Ընդհանուր մուտք եղաւ 142 ր. 66 կ., ծախս՝ 51 բուբլի 52 կօպէկ, դուրս գալով՝ մնաց զուտ արդիւնք 91 բուբլի 14 կօպէկ. որը, խնդրում եմ, բարեհաճեցէք ուղարկել, ուր պէտք է։ Աւելորդ չենք համարում խորին շնորհակալութիւն յայտնել պ. Իւրկևիչին, որ նա իր ամբողջ շինութիւնը դրեց սիրողների տրամադրութեան տակ ամբողջ երկու շաբաթ, ուր և ներկայացումը կատարվեց։

Մ. Ղազարեան

IV

Թիֆլիս, մարտի 4-ին

Մի անձնաւորութիւն փող է հաւաքում իբր թէ ս. Նշանի ուսումնարանի որբ երեխաների համար։

Սրանով յայտնում եմ, որ ուսումնարանի կողմից ոչ ոքի լիազորութիւն չէ տրված այդպիսի ժողովարարութիւն անելու։

Ս. Նշան ուսումնարանի աւագ վարժուհի՝ Հ. Տիգրանեան

V

Պարիզ, մարտի 9-ին

Բագուի դաւին դժբաղդ զոհերուն ի նպաստ, Բագուի հանգանակութեան համար, հաճեցէք ընդունել իմ եղբայրական լուման (10 ֆրանկ)։

Ա. Զօպանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ թեմիս առաջնորդ Գարեգին եպիսկոպոս Սաթունեանը Զխարի գիւղի այրվածների ցուցակն ստանալուն պէս՝ դիմել է ուր հարկն է թոյլտուութիւն ստանալու ողբասվածների օգտին հանգանակութիւն բանալու համար։ Սրբազանը կազմել է մասնաժողով։ Բացի դրանից՝ իշխանուհի Մարիամ Թումանեանն ևս կազմում է, ինչպէս լսեցինք, կանանց մասնաժողով, միջոցներ ձեռք առնելու օր առաջ օգնութեան հասնելու Զխարի անտուն ու սովալլուկ մնացածներին։ Լիայոյս ենք, որ, չը նայելով ներկայ ծանր ժամանակներին, մեր հասարակութիւնը անուշադիր չէ թողնիլ Իմերէթի մի անկիւնում տաբագրեալ մնացած հայերի աղերսանքը և միջոցներ կը տայ յիշեալ մասնաժողովներին ի կատար ածելու իրանց բարի նպատակը։

—

Պետերբուրգի ռուսաց հեռագրական գործակալութիւնը հեռագրում է հետևեալ լուրերը։ «Բագու, 2 մարտի։ Իշխան Ամիլախորի նախագահութեամբ փետրվարի 18-ի նիստին ժամանակցող հայերը հերքում են այն լուրը, թէ իբր հայերը արդարացնում էին ծածուկ կոմիտէտների գոյութիւնը, իբր հայ յեղափոխական կոմիտէտների գործունէութեամբ է առաջ եկած ընդհարումը հայերի և մուսուլմանների մէջ, իբր ռուս բանւորների փախուստը Բագուի նաւթահորերից առաջ է եկել հայ տերրորիստների ազդեցութիւնից, որոնք ցանկացել են փոխարինել նրանց թիւրքահայ փախստականներով։ Նրանք խնդրում են ռուս մամուլից վերաբերվել զգուշաբար Բագուին հասած դժբաղդութեան լուրերի հրատարակման»։

—

Նոյն հեռագիրը հաղորդում է, որ Էջմիածնի Սինոդի անդամ Աշոտ Շախեան վարդապետին հրամայված է լինել Ղարաբաղի հայ-գրիգորեան թեմի առաջնորդ, ի տեղի արձակված Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեանի։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ փետրվարի 21-ին, Թիֆլիսի արքունական թատրոնում տրված «Եւգենի Օնեգին» օպերայից յօգուտ Բագուի աղէտի զոհերի զուտ արդիւնք գոյացել է 315 բուբլի 20 կօպէկ, որը և յանձնվել է տիկին Խուդավերդեանի ձեռքով Թիֆլիսի հայոց առաջնորդարանի յանձնաժողովին՝ գործադրելու նպատակի համար։

—

Կարսից հաղորդում են «Кав.»-ին, որ ներկայ մարտ ամսի 1-ին, առաւօտեան ժամը 8-ին Կարսի Ալէքսանդրեան փողոցում երկու մարդ ատրճանակի չորս հարուածով մէջքի կողմից՝ սպանեցին Կարսի ոստիկանապետի օգնական Սավանէլիին։ Սպանողները դեռ ևս գտնված չեն։

—

Բագուի արական գիմնազիաներից մէկի ուսուցիչ Ե. Ա. Բոգոսլովսկին ներքին գործերի մինիստրութիւնից նշանակվել է Բագու քաղաքում ցենզօրական պաշտօնը վարելու։

—

Որոշված է մի առ ժամանակ դադարեցնել Թիֆլիսի այգեգործական դպրոցի պարապմունքները։

—

Քութայիսի Սէնատ գաւառը, ինչպէս յայտնի է, պատերազմական վիճակում է յայտարարված, բայց չը նայելով այդ վիճակի դրակօնական խստութիւններին այնտեղ անհնար է լինում կարգը վերահաստատել. փետրվարի 27-ին այդ գաւառի Թէքլաթի գիւղական համայնքում անայտ յանցագործներն այրել են Զիմիգուրի և Բէրքի ազնուական կալուածատէրերի տները. փետրվարի լոյս 28-ի գիշերը նոյն գիւղական համայնքում զինված յարձակում են գործել Կօչէբայի տան վրա։ 28-ի առաւօտեան զինված յարձակում է եղել ստրաժնիկների բնակարանի կամ զօրանոցի վրա. ստրաժնիկներն անվնաս մնացին, իսկ յարձակվողները փախան անյայտացած։ Փետրվարի 28 ի գիշերը նոյն Սէնաքի գաւառում այրել են Էկսի, Զագդիդի և Խօրդինի գիւղական վարչութեան շէնքերը բոլոր թղթերով ու գործերով միասին։ Ամեն կողմից շարունակվում են լսվել լուրեր կալուածատէրերի և կապալառուների տները կրակ գցելու մասին։ Ժողովուրդը զինված դուրս է եկել և հրդեհում է թէ վարչական և թէ հողատէրերի ստացվածքները։ (Кав.)

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան գիտական կոմիտէտը վճռել է թոյլատրել ժողովրդական ձրի գրադարաններում և ընթերցարաններում գործածութեան դնելու Նեկրասովի երկերի ժողովածուն։—Վերջապէս ռուս մեծ բանաստեղծը՝ երկար տարիներ իր մահից յետոյ անգամ աքսորված մնալուց յետոյ, իր սիրած ժողովրդի սիրտն ու միտքը կրթելուց, բաղդ է ունենում այժմ միայն ազատ հասարակութեան ժառանգը լինելու—Նոյն կոմիտէտը վճռել է այլ ևս թոյլ չը տալ «Рус. Газ.» լրագրի գործածութիւնը ժողովրդական ձրի գրադարաններում և ընթերցարաններում, որովհետև այդ լրագիրը վերջերս տենդենցիոզ բնաւորութիւն և ուղղութիւն է ստացել։

—

«Р. В.» լրագիրը հաղորդում է, որ այս օրերս բանդից ազատեցին ռուս հռչակաւոր գրող Լէոնիդ Նիկոլաեվիչ Անդրէեվին և «Սկիտալեցին» (Գ. Ս. Պետրով)։—Р. Сл. լրագիրը տեղեկացել է, որ Լ. Ն. Անդրէեվիչն ազատված է Սավա Մօրոզովի երաշխաւորութիւնով։ Նա ներկայացրել է 10,000 ր. գրաւական։

—

Անդրկովկասի երկաթուղիների վարչութեան խորհուրդը որոշել է վճարել իր բոլոր բանւորներին գործադադար եղած օրերի համար օրավարձի 3/4-ը, եթէ բանւորն ընտանիքատէր է, և 1/2-ը եթէ բանւորն ամուրի է։ Այդ մասին արդէն տեղեկութիւն է տրված պետական երկաթուղիների գլխաւորին և հաղորդակցութեան ճանապարհների մինիստրին։ Բայց բանւորները՝ դժգոհ են մնացել այդ վճռից. նրանք պահանջում են ամբողջ օրավարձ։ Այդ նպատակով նրանք մարտի 2-ին 3000 հոգով գնացել են Անդրկովկասի երկաթուղու գլխաւոր Իվանովսկու մօտ, որպէս զի անձամբ բացատրեն նրան իրանց պահանջը։ Բայց պ. Իվանովսկին հրաժարվեց բանակցել անմիջապէս ամբոխի հետ և առաջարկեց, որ բանւորներն ընտրեն պատգամաւորներ՝ բանակցելու համար։

—

Թիֆլիսի թիւրքական գլխաւոր հիւպատոսը տպագրել է «Нов. Обозр.» լրագրում հետևեալ հերքումը. «Երէկ մի քանի տեղական լրագիրներ հաղորդեցին նորին մեծութեան սուլթանի անձի դէմ եղած սպանութեան անաջող փորձի և մի քանի պալատական բարձր պաշտօնեաների փախուստի մասին։ Այդ լուրերը տարածել են չարամիտ մարդիկ։ Բոլոր թիւրքահպատակները՝ առանց ազգութեան և կրօնի խտրութեան՝ աղօթում են նորին մեծութեան սուլթան Աբդուլ-Համիդի թանգագին կեանքի և թագաւորութեան երկարացման համար»։ Ինչո՞ւ որոնել «չարամիտ մարդիկ», երբ այդ լուրը հաղորդել է հեռագրակոն մի ամբողջ գործակալութիւն։

—

«Echo de Paris» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հեռագրում է փետրվարի 21-ին. «Ցանկալով վերականգնել երկրում իրերի բնական ընթացքը, մինիստրներն ուզում են արագ իրականացնել փետրվարի 18-ի ընկերիպատում խոստացված բարենորոգութիւնները։ Մի քանի օրից յետոյ կը որոշվի այն յանձնաժողովի կազմը, որը ներքին գործերի մինիստր Բուլիգինի նախագահութեամբ կը սկսէ այդ առիթով հարկաւոր աշխատանքները։ Յանձնաժողովը բաղկանալու է զեմստվոների և գաւառական վարչութեան ներկայացուցիչներից։ Բացի դրանից՝ նրա մէջ մտնելու են Պետական խորհրդի մի քանի անդամները։ Յանձնաժողովը պէտք է մշակէ ընտրողական սիստեմի և ժողովրդական ներկայացուցիչների ժողովի ձևերը։ Ենթադրում են, որ 2 ամսից յետոյ ներկայացուցիչների ընտրութիւնները կը կայանան։ Ռուսաստանում լինելու է երկու պարլամենտ—մէկը՝ ժողովրդի ընտրված, միւսը՝ թագաւոր Կայսրից նշանակված։ Երրորդ ժողովը կազմված է լինելու ներկայ Պետական խորհրդից՝ մի քիչ ձևափոխված և կունենայ խորհրդակցական ձայն, ինչպէս և այժմ։ Մինիստրների ներկայ կոմիտէտը կը ոչնչանայ և կը փոխարինվի եւրոպական ձևի մինիստրական խորհրդով, միայն առանց պատասխանատուութեան պարլամէնտների առաջ։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ հաղորդում են. «Փետրվարի 24 ին, Վարդանանց տօնի օրը հանդիսաւոր պատարագի միջոցին ժողովրդի բազմութեան առաջ օրվայ առիթով ճառ խօսեց պ. Ղ. Քեսէչեճեան, իսկ երկրորդ ճառախօս ուսանողի խօսքը ընդհատվեց»։

—

ՏԿՎԻԲՈՒԼԻՑ մեզ գրում են մարտի 2 ին. ««Այսօր «Նախշիրա» ընկերութեան գործարանում երեք բանւորներ հողը քանդելիս ընկան մի մեծ հողաթմբի տակ, որոնցից մէկը իսկոյն մեռաւ, իսկ երկուսը վիրաւորվեցին։ Ասում են, որ հանգուցեալը ոչ ոք չունէր, բացի մի պսակած աղջկանից, որի տանը և ապրում էր»։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Կամաց կամաց յուզված մտքերը հանգստանում են, ամեն ինչ խաղաղ է։ Բոլոր խանութները բաց են. ամենը իրանց սովորական պարապմունքներն են շարունակում։ Վերջին օրերս երկու դժբաղդ դէպքեր տեղի ունեցան մեզանում, որոնք վրդովմունք պատճառեցին ազգաբնակութեանը։ Փետրվարի 25-ին, ուրբաթ, գիշերվայ ժամը 10-ի ժամանակ սպանվեց երիտասարդ Տիգրան Մկրտչեան Յակոբեանը։ Թաղումը տեղի ունեցաւ կիրակի օր, փետրվարի 27-ին. յուղարկաւորութեանը ներկայ էր Կարսի հայ ամբողջ հասարակութիւնը. յարգողների և ընկերների կողմից դրված էին 5 պսակներ։ Հանգուցեալը ծերունի ծնողաց անդրանիկ և միակ յոյսն էր։ Երկրորդ դէպքը, որ այսօր առաւօտեան ժամը 10-ին տեղի ունեցաւ, այս է. Ալէքսանդրեան լայն և մարդաշատ փողոցի մէջ, անյայտ մարդկանց չորս գնդակներից գետին ընկաւ և նոյն րոպէին հոգին աւանդեց, տեղիս պրիստավի օգնական Սաւալինին։ Սպանութեան տեղը իսկոյն եկան ոստիկանապետը, պրիստաւները. կատարվում է քննութիւն։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Մուկդէնի ճակատամարտի հետեւանքները։ «Новости» լրագիրը իր առաջնորդող յօդուածում ասում է. «Մուկդէնում մնալը մօտենում է իր լուծման, և դատելով բոլոր նշաններից, մեզ

համար ոչ պատուաւոր լուծման։ Ճիշդ է, եթէ դատելու լինենք գլխաւոր հրամանատարի պաշտօնական հեռագիրներով, եապօնացիների բոլոր յարձակումները յետ են մղված, բայց այդ խիստ պակասաւոր տեղեկութիւնների հետ միասին մենք ունենք ոչ-պաշտօնական տեղեկութիւններ, որոնք յանգում են մի եզրակացութեան, այն է—թէ ռուսաց բանակը նահանջում է։ Անկասկած է, որ նահանջումը (նոյն իսկ որոշ կարգով) ինչորեայ յամառ կռիւներից յետոյ հաւասար է պարտութեան։ Բայց ինչ է նշանակում այդպիսի պարտութիւն ներկայ պայմաններում։ Ոչ աւելի, ոչ պակաս քան ճակատամարտի տարվելը, որովհետև չը պէտք է մոռանալ, որ ներկայ կռիւները Մուկդէնի մօտ իրանց զոհերի քանակութեամբ գերազանցում են բոլոր նախկին պարտութիւններից։ Ճակատամարտը նորոգելու համար կը պահանջվի ամենաքիչը դեռ էլի 400,000 մարդ, որոնց կարճ ժամանակում կենտրոնացնել անհնարին է։

«Ինչով բացատրել այդ աւելի քան ցաւալի արդիւնքը։ «Temps» լրագրի յատուկ պատերազմական թղթակիցը բոլորովին հիմնաւորապէս նկատում է, որ ուրիշ բան էլ սպասել անկարելի էր։ Եապօնացիները, նրա կարծիքով, վաղուց արդէն հասկացել են ռուսների պատերազմ վարելու գաղտնիքը։ Նրանք հաժողվել են ընդդիմադրութեան կատարեալ կրաւորականութեան մէջ։ Զօրքի արժանաւորութիւնները կասկածից դուրս են և վաղուց գնահատված են մեր թշնամիներից։ Ինչ տեսակ զօրքեր էլ ուղարկվեն գործող բանակի օգնութեան, դրանից օգուտ դժուար է սպասել։ Միակ պուտիլեան բլուրը, որ առնվել էր եապօնացիներից ծանր կորուստներից յետոյ, այդ էլ, լուրերին նայելով, յետ են տուել...։

«Մուկդէնից նահանջելու լուրը արդէն բացատրվում է եւրոպական մամուլի մէջ այն մտքով, թէ գեներալ Կուրոպատկինը նահանջում է դէպի իր յենակէտը։ Բայց որտեղ է այդ հռչակաւոր յենակէտը։ Առաջ դա Լեաոեանն էր, յետոյ Մուկդէնը, այժմ Տէլինը, իսկ յետոյ, ինչ, Վլադիվոստոկը արդեօք։ Յենակէտներ շատ կան, բայց վատն այն է, որ յենակէտների այդպիսի փոփոխութեան ժամանակ փոխվում են դէպի Ջատը և հաշտութեան պայմանները։ Քանի որ Պորտ-Արտուրը չէր առնված, կարելի էր հաշտութիւն կնքել աւելի կամ քիչ որոշ պայմաններով։ Իսկ այժմեան կռիւներից յետոյ պայմանները աւելի քիչ յարմար կը լինեն։ Պատերազմի վարման այժմեան եղանակով աւելի և աւելի անհաւանական է թւում ոչ թէ պատուաւոր, այլ նոյն իսկ փոքր ի շատէ տանելի հաշտութեան կնքումը։ (Нов.)

Վերջին լուրերը պատերազմի մասին։ Արտաասահմանեան մամուլի մէջ առաջվայ պէս յուզիչ լուրեր են պատում ռուսական զօրքերի վանդաւոր դրութեան մասին։ «Berl. Tageb.» լրագիրը հաղորդում է արժանահաւատ աղբիւրներից, թէ իբր Կուրոպատկինից հեռագիր է ստացվել, որ գուժում է, թէ 250,000 եապօնացիներ պատռել են ռուսաց ձախ թեը և կտրել են նրան բանակի մնացած մասից։ Իսկ յետոյ իբր թէ ստացվել է մի ուրիշ հեռագիր, որ ասում է. «Եապօնացիները գալիս են Մուկդէնի վրա. իմ դրութիւնը չափազանց վտանգաւոր է»։

Սակայն գերմանական լրագիրը հաւաստիացնում է, որ ունեցած տեղեկութիւնների համաձայն, ռուսների Մուկդէնը թողնելը և նահանջելը դէպի Տէլին վաղուց նախատեսված է և մտնում է Կուրոպատկինի ծրագրի մէջ, որ Տէլինում ևս մեծ աջակցութիւն կստանայ, որովհետև արդէն աջակից զօրքեր են ուղարկված պատերազմի բեմը։ Եւ միայն այդ ժամանակ, գլուխ կանգնելով հակառակորդի ոյժերը գերազանցող ոյժերի, նա կը տայ նրան վճռական կռիւ։ «Temps» լրագիրը այն կարծիքն է յայտնում, թէ այժմեան կռիւ ելքի մասին միայն մի բան կարելի է ասել, որ պատերազմի վերջը հեռու չէ։ (Нов.)։

Այսօրվայ հեռագիրները ցոյց են տալիս, որ Կուրոպատկինը արձակված է գլխաւոր հրամանատարի պաշտօնից։

Խօսակցութիւն Երմոլովի հետ։ «Matin» լրագրի թղթակիցը հեռագրում է փետրվարի 21-ին. «Ռուսների Մուկդէն թողնելու լուրը ոչ ոքի չէ զարմացնում։ Երկրագործութեան մինիստրը, որի մօտ այսօր էի, ասաց ինձ, որ Կուրոպատկինը երբէք դիտաւորութիւն չէ ունեցել անպատճառ պահպանել Մուկդէնը, որովհետև ի նկատի ունէր այդ քաղաքի աննպաստ ռազմագիտական դրութիւնը և այն հանգամանքը որ չինական ժողովրդի համար այդտեղի կայսերական շիրիմները նուիրական նշանակութիւն ունեն։ Չը պէտք է զարմանալ, որ ռուսաց զօրքը շարունակ նահանջում է։ Կուրոպատկինը, Մանջուրիա մեկնելիս, հանդիսաւոր կերպով ասաց. «Համբերութիւն և համբերութիւն։ Ես կը նահանջեմ, եթէ պէտք լինի, դէպի Խարբին, որովհետև պատերազմի առաջին շրջանը կարող է աննպաստ հանդիսանալ, բայց ես յաղթող դուրս կը գամ երկրորդ շրջանում»։ Համաձայն այդ յայտարարութեան, պատերազմը պէտք է շարունակվի դեռ շատ տարիներ, որովհետև մենք Կուրոպատկինի ծրագրած պլանի դեռ կէսի կատարումն ևս չենք տեսել։ Գլխաւոր հրամանատարի պաշտօնը ուրիշ անձի յանձնելը, մինիստրի, խօսքով, քիչ հաւանական է, որովհետև շատ դժուար է նրան յաջորդ գտնել»։ Սակայն, կցեց Երմոլովը, ես լսել եմ Մանջուրիայից եկած անձերից, որ գլխաւոր հրամանատարը առաջվայ պէս վայելում է իր զինուորների լիակատար վստահութիւնը։ (Р. Сл.)

Ռուսական զօրքի յետ նահանջումը։ «Neue Freie Presse» լրագիրն ասում է. «Ամբողջ ռուսական բանակը յետ է նահանջում. գեներալ Կուրոպատկինը արդէն մէկ ուրիշ տեղ փոխադրեց իր գլխաւոր բանակը։ Մուկդէնից դէպի հարաւ Շախէի մօտ, նոյնպէս և դէպի արևմուտք ռուսները դեռ ևս իրանց ձեռքումն են պահում մի քանի դիրքերը, սակայն այստեղ, ակներև յետ նահանջումը պաշտպանելու մասին է խօսքը, որը կիրագործվի ամենաանպաստ պայմաններում, եթէ եապօնացիները դեռ ևս իրանց տրամադրութեան տակ ունեն թարմ զօրքեր։ Մի կողմից Սինմինտինից դուրս եկած եապօնացիները խիտ կերպով կանգնած են Մուկդէնից դէպի Տէլին տանող երկաթուղու մօտ, նոյնպէս և Մանտարինեան կողմից ռուսական ձախ թեի յետ նահանջումը, եթէ եապօնացիներին աջողվի մօտենալ Ֆուշանին, կապված կը լինի ամենամեծ դժուարութեան հետ։ Որովհետև երկաթուղու ճանապարհը և Մանդարինեան ուղին Մուկդէնից դէպի Տէլին ձգվում են ոչ թէ հիւսիսային, այլ հիւսիս-արևելեան ուղղութեամբ, ուստի տարածութիւնը Ֆուշանից մինչև ռուսական ոյժերի կենտրոնացման նոր կէտը 50 վերստով աւելի կարճ է, քան տարածութիւնը ռուսական դիրքերից դէպի հարաւ Մուկդէնից մինչև Տէլին։ Բացի դրանից եապօնացիները երևի կանգ չեն առնի ոչ մի զոհի առաջ, միայն թէ թուլացնեն ռուսների դիմադրութեան ոյժը Տէլինի մօտ։ Կուրոպատկինի և նրա բանակի բաղդից եապօնացիների ոյժերը նոյնպէս չափազանց սպառված են 14 օրվայ կռիւներից, և նրանք երևի պահանջ են զգում լրացնելու իրանց ուտեստի և ռազմամթերքի պաշարները, նախ քան արշաւելը դէպի մի տեղ, որը, անկասկած, ուժասպառ է եղել ռուսական զօրքի այնտեղ երկար մնալու պատճառով։ Ահա թէ ինչու ռուսները դեռ կարող են ժամանակ վաստակել և մինչև անգամ դրութիւնը փրկել, եթէ նրանց հեծելազօրքը աւելի եռանդուն կարողանայ գործել։ Бирж. Вѣд.

—«Daily Tel.» լրագրին հեռագրում են Տոկիօից, որ ռուսական կենտրոնը կորված է յետ նահանջման ճանապարհից։ Բարձրութիւնները Մուկդէնից դէպի արևմուտք անդադար ռմբակոծվում են ծանր թնդանօթներով և այդ դիրքերի գրաւումը պէտք է տեղի ունենայ շատ շուտով։ Եապօնացիների ձեռքն ընկաւ ռումբերի և ուտեստի պաշարների անագին քանակութիւն։ Վերջին տեղեկութիւնները Տէլինից հաղորդում են, որ այդ խիստ ամրացրած քաղաքը պաշտպանվում է 4 հազար մարդուց բաղկացած զօրաբաժնի կողմից։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ուրմիա, փետրվարի 28-ին

Անցեալ տարվայ մարտ ամսին Խոյի և Սալմաստի ճանապարհում սպանված ամերիկացի միսիոնար Լէպրիի խնդիրը դեռ մինչև այսօր առկախ մնացած է։ Միսիոնարին սպանող սէիդը արդէն վաղուց Թէհրան տարված է, նաև այս խնդիրը քննելու համար Ամերիկայի նախագահ պ. Ռուզվէլտի հրամանով դոկտոր Հարթօն հիւպատոսը, Թիւրքիայից մի քանի ամիս առաջ Ուրմի գալով աջողվեց նրան սէիդի ընկերներից հինգ բէկզադաներին ձերբակալել տալով Թէհրան ուղարկել, ու այժմ ինքը դոկ. Հարթօն էլ Թէհրանումն է գործի քննութեան վերահասու լինելու։ Թէհրան ուղարկված 5 բէկզադաներիցը 3-ը մեղաւոր են ճանաչվել, 2 ը արդարացել, բայց մի և նոյն ժամանակ Ուրմիից խստիւ պահանջում են դարձեալ 8 հոգի սէիդին ընկերակցող մեղսակից բէկզադաներից, և ահա այժմ հեռաքրքիր է տեսնել, թէ արդեօք ճիրը և ինչ միջոցներով այդ 8 ին ևս ձերբակալելով կուղարկեն Թէհրան։

Պարսից կառավարութիւնից 30,000 թալեր գանձված ու յանձնված է Վաշինգտոնի բանակին ու այդ մասին յայտարարված այրի տիկ. Լէպրիին, որ իր տրամադրութեան տակ դնում են կարգադրելու, ուր որ ուզէ ստանալ. սակայն տիկ. Լէպրի հրաժարվելով հրաժարված է այդ արեան գնից մէկ թալեր իսկ ստանալու։ Եթէ վերոյիշեալ 8 մեղսակիցներին ժամանակին չուղարկեն Թէհրան, 30,000 պարսկական թուման ևս պիտի վճարէ պարսից կառավարութիւնը Վաշինգտոնի բանկին։

Հանգուցեալ Լէպրիի կրտսեր եղբայրը, որ Ամերիկայում մի մեծ եկեղեցու հովիւն էր, լսելով իր եղբօր հետ պատահած դժբաղդութեան մասին՝ հրաժարված է իր այնտեղի պաշտօնից ու 5—6 ամիս առաջ Ուրմի գալով՝ հանգուցեալ եղբօր պաշտօնն է ստանձնած։

Այրի տիկ. Լէպրի իր տկարութեան պատճառով մօտ օրերս վերջնականապէս իր երկու զաւակների հետ մեկնում է Ամերիկա։

Մ. Ս. Փիրան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

3 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի 3-ին Պետերբուրգի զինուորական-նահանգական պատարանում բարոն Օստեն-Սակէնի նախագահութեամբ սկսվեց յունվարի 6-ի Ծննդեան զօրահանդէսի ժամանակ դժբաղդ դէպքի առիթով գործի քննութիւնը։ Դատաստանի են ենթարկված անհոգութեան և ծառայութեան մէջ անփութութեան համար գվարդիական բրիգադայի կապիտան Դաւիդովը, շտաբս-կապիտան Կարցով և պոդպորուչիկ Բօտ առաջին և երկրորդ, ընդհանուր շտաբի փոխ-գնդապետ Պոլովցեվ և բրիգադայի երեք զինուորներ։ Մեղադրական ակտից յայտնվել է, ոստիկանութեան դեպարտամենտի եզրակացութեան համաձայն, որ հրաձգութեան ժամանակ չար միտք չէ եղել։ Ամբաստանված օֆիցէրների և զինուորների խօսքով յայտնվեց, որ հին ծառայողների հետ զրաղմունքները քիչ էին լինում. մի քանի զինուորներ չը գիտէին ինչպէս վարվել թնդանօթների խցանների հետ. հրաձգութիւնից առաջ թնդանօթները խողովակի մէջ ամենևին չէին քննվել. կարտէչային գործիքների պահպանութիւնը անխնամ կերպով էր կատարվում, որով և բացատրվում է յունվարի 4-ի զբաղմունքից յետոյ պատանմամբ մնացած կարտէչը։ Վճռի յայտնումը սպասվում է վաղը, մարտի 4-ին։ Բոլոր ամբաստանեալները համակրելի տպաւորութիւն են թողնում։ Արձանագրութեան մէջ մտցրվեց կապիտան Դաւիդովի յայտարարութիւնը, որ ամենքը նիւթապէս հոգ կը տանեն մնացած ոստիկան Բօմանովի մասին։

ՎԱՐՇԱՎԱ, 3 մարտի։ Վարշավայի համալսարանում, որը փակված է յունվարի 10-ից, կայացաւ խորհրդի արտակարգ նիստ պարապմունքների հարցը քննելու համար։ Խորհուրդը այն եզրակացութեան եկաւ, որ անհրաժեշտ է սպասել ընդհանուր հանգստութեանը և դրպրոցական գործի կանոնաւորմանը երկրում և որ համալսարանական կեանքի կանոնաւոր ընթացքի համար ապագայում անհրաժեշտ է ըէֆորմներ մտցնել ինքնավարութեան և ակադէմիական ազատութեան ոգով։

ՊԱՐԻԶ։ Հայաշի յայտնեց, որ Եապոնիան կը շարունակէ պատերազմը այնքան ժամանակ, մինչև որ Ռուսաստանը չը սկսէ բանակցութիւններ խաղաղութեան մասին։

ՍՕՖԻԱ։ Արտաքին գործերի մինիստրութիւնը հեռագիր ստացաւ, որի մէջ հաղորդվում է, որ երէկ Մօնաստիրում մի յոյն չորս անգամ ըէվոլվէր կրակ։ց բուլգարական բժիշկ Վլադովի վրա, սակայն գնդակը չը կպաւ նրան։ Ցանցաւորը թէպէտ յայտնի է, բայց դեռ ևս չէ ձերբակալված։

4 մարտի

ՎՕՐՕՆԷԺ, 3 մարտի։ Բացվեց զէմստվոյի արտակարգ ժողովը։ Ընտրված է առանձին յանձնաժողով խնդրագրի բնագիրը կազմելու համար։ Բարձրագոյն անունով՝ զէմստվոյի ներկայացուցիչների մասնակցութեան մասին ներքին գործերի մինիստրի նախագահութեան տակ գտնվող խորհրդակցութեան մէջ։

ԼՕՆԴՕՆ։ Եապոնական միսիան հրատարակեց պաշտօնական հեռագիր Տոկիօից, որ եապօնական առաջապահ զօրքը նեղում է ռուսներին և այսօր 12 ժամ 20 րոպէին գրաւեց Տէլինը։

ԲԵՐԼԻՆ։ «Լոկալ Անցէյգէր» լրագրի թղթակից Բինդէր ընկաւ Մուկդէնում եապօնացիների ձեռքը։

ՍՕՖԻԱ։ (Բերլինի վրայով)։ Հիւպատոսների զեկուցման համեմատ, Թիւրքաց զօրքերի հրամանատարները Մակեդոնիայում ցուցմունքներ ստացան հոգ տանել կատարելապէս հեռացնելու չէտաների վիրաւոր և գերի բռնված անդամներին, որպէս զի յետոյ հարկաւոր չը լինի ներումն շնորհել։

ԹԱՒՐԻԶ։ Թագաժառանգը ճանապարհ է ընկնում Թէհրան անորոշ ժամանակով։—Շարունակվող ցրտերի պատճառով հաւանութիւն կայ, որ խոլերան չի լինի գարնանը։ Առևտուրը համարեա դադարեց։

ՏՕԿԻՕ (Բերլինի վրայով)։ «Ռոսիա» և «Գրոմօբոյ» կրէյսէրները պատրաստված են լողալու. 20 ականանաւեր և մի մի քանի ըստորջրեայ նաւակներ Վլադիվոստոկում պատրաստ են նոյնպէս ծովը դուրս գալու։

ՏՕԿԻՕ։ Եապոնական զօրքերը, որոնք գրաւած ունէին Իմպանը Ֆուշունից դէպի արևելը, հալածում էին ռուսներին գիրինեան ճանապարհով։ Կարծում են, որ ռուսները յետ կը քաշվեն դէպի Խարբին։ Տէլինում բանակած ռուսական զօրաբաժինը, թւով մօտ մէկ դիվիզիա, հեռացաւ այնտեղից մի փոքր դիմադրութիւնից յետոյ։

ԹԱՒՐԻԶ։ Քաղաքում հանգիստ է, թէպէտև խօսակցութիւններ առաջիկայ անկարգութիւնների մասին չեն դադարում։

ՍՕՖԻԱ։ Առևտրական դաշնագիրը Աւստրիայի հետ երկարացված է մինչև սեպտեմբերի 1-ը. մեծացրված է միայն մաքսահարկը կէրոսինի վրա 1-ից մինչև 5 ֆրանկ։ Աւստրիան յայտնեց, որ չի արգելի մենավաճառութիւն մտցնել աղի և լուցկիի վրա։ Բուլգարական մամուլը ջերմ համակրութիւններ է յայտնում ռուսական բանակին, որը պէտք է յետ նահանջէր Մուկդէնից և յոյս է յայտնում, որ ապագայում մեծ դժուարութիւններ կը սկսվեն եապօնացիների համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մարտի։ Բարձրագոյն հրաման յանուն զինուորական վարչութեան մարտի 3-ին. ընդհանուր շտաբի մէջ համարվող, Եապոնիայի դէմ գործող բոլոր ցամաքային և ծովային սպառազինված զօրութիւնների գլխաւոր հրամանատար, գեներալ-ադիւտանտ, ինֆանտերիայի գեներալ Կուրոպատկինը արձակվում է գլխաւոր հրամանատարի պաշտօնից, թողնվելով գեներալ-ադիւտանտի պաշտօնում։

Հետևակ զօրքի մէջ համարվող Մանջուրական առաջին բանակի հրամանատար ինֆանտերիայի գեներալ Լինեվիչը նշանակվում է գլխաւոր հրամանատար Եապոնիայի դէմ գործող բոլոր ցամաքային և ծովային սպառազինված զօրութիւնների։

4 մարտի

ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ, 3 մարտի։ Գեներալ Կազբէկը բերդին տուած իր առաջին հրամանի մէջ յայտնեց Նորին Մեծութեան Ամենաողորմած խօսքերը, ասված նրան Ցարսկոէ-Սէլօում Հեռաւոր Արևելք մեկնելու նախընթաց օրը. «Հաղորդեցէք Վլադիվոստոկի բոլոր բերդապահ զօրքին և ազգաբնակութեան, որ Ես հաստատ կերպով հաւատում եմ նրանց անձնուիրութեանը դէպի Ինձ և դէպի հայրենիքը, և համոզված եմ, որ նրանք փայլուն կերպով կը կատարեն իրանց վրա ընկած փառաւոր պարտքը. Թող Աստուած օրհնէ բոլորիդ»։ Զօրքերը ցնծութեամբ ընդունեցին արքայական խօսքերը։ Բերդապահ զօրքը վստահ իր ոյժերի վրա՝ համբերութեամբ սպասում է այն րոպէին, երբ կը կարողանայ գործով ապացուցանել իր խօսքերը։

ՄՕՍԿՎԱ, 3 մարտի։ Հասարակական առողջապահութեան վրա հսկող քաղաքային յանձնաժողովը՝ խոլերայի և չումայի դէմ կռուելու համար զեկուցումն կազմեց։ Գոյութիւն ունեցող բոլոր կանոնները անբաւարար համարելով՝ յանձնաժողովը առաջարկում է քաղաքային խորհրդին միջնորդել, որպէս զի հիւանդութիւնների դէմ կռուելու ամբողջ կազմակերպութիւնը յանձնվի քաղաքի տեսչութեանը։

ԿԻԷՎ, 3 մարտի։ Հարաւ-ռուսական մեքենաշինական գործարանների վարչութիւնը յայտարարում է, որ բանւորական ոչ մի նոր

պահանջի բաւարարութիւն տալ չէ կարող։ Գործարանը փակված է։

ԲԵՐԼԻՆ, 3 մարտի։ Ռէյխստագում Բէբէլ յարձակվում էր Գերմանիայի գործունէութեան եղանակի վրա Ռուսաստանի վերաբերմամբ, քննադատում էր քաղաքական յանցաւորներին յանձնելը և կասկած յայտնեց Գերմանիայի չէզոքութեան մասին նաւեր ծախելու հարցում։ Բէբէլի խիստ լեզուն սաստիկ աղմուկ առաջացրեց։ Բէբէլ մի քանի անգամ կարգի կանչվեց, որովհետև վիրաւորեց արդարադատութեան մինիստրին հայհոյական խօսքերով և խայտառակութիւն անուանեց յանցաւորներին յանձնելու վերաբերեալ ռուս-գերմանական դաշնագիրը։ Կոմս Բիւլով պատասխանեց, թէ ինքն յայտնեց երէկ, որ վերջին 20 տարիների ընթացքում քաղաքական յանցանքների մէջ մեղադրվողներին յանձնելու ոչ մի դէպք չը կար։ Նաւերի հարցի վերաբերմամբ կանցլեր ասեց, որ գերմանական ածխատարները չը պէտք է ուղեկցէին ռուսական պատերազմական նաւերին, այլ միայն ածուխ հայթայթել էսկադրային արտասահմանեան նաւահանգիստներում։

ՏՕԿԻՕ, 3 մարտի։ Մի քանի շրջաններում կարծում են, որ Կուրոպատկին կը թողնէ Տէլինում վիրաւորներին և կը փորձէ կենտրոնանալ հիւսիսում։—Իմացվում են դէպքեր, երբ օֆիցէրները չէին պահել իրանց տուած աղնիւ խօսքը։ Այդպիսի օֆիցէրներ մահվան պատժի են ենթարկվելու։—Աջողութեամբ է առաջ գնում Պորտ-Արտուրը ականներից մաքրելու գործը։ Մարտանաւերն արդէն մտնում են նաւահանգիստը։

ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ։ Վլադիվոստոկի և մեր ծայրի բնակիչները վրդովված են այն լուրերից և խօսակցութիւններից, թէ անհրաժեշտ է մեզ խաղաղութեան դաշն կապել Եապոնիայի հետ։ Խաղաղութեան վրա պնդել կարող են միայն Ռուսաստանի համար ներկայ պատերազմի և նրա սարսափելի հետևանքների ահագին նշանակութիւնը չը հասկացողները մեր անաջողութիւնից յետոյ խաղաղութեան դաշն կապելու դէպքում։ Բոլոր իսկական ռուս մարդիքը պարտաւոր են անաջողութեան ներկայ ծանր ժամանակում միանալ սիրոյ մի զգացմունքով դէպի հայրենիքը և Գահը, մինչև վերջին հնարաւորութիւնը, չը խնայելով ոչ ոյժերը, ոչ միջոցները, ոչ հէնց կեանքը, պաշտպանել մեր ազգային պատիւը և չը զիջել Ռուսական Երկրի ոչ մի թիզ։

ԼՕՆԴՕՆ, 3 մարտի։ Էդուարդ թագաւորը ընդունեց առաւօտեան չինական դեսպան Զանգ-Եայինին, որը յանձնեց նրան չինական կայսրի ինքնագիր նամակը։ Ունկնդրութեանը ներկայ էր Լանսդոուն։

ԲՕՄԲԷՅ։ Պալարային ժանտախտի տարափոխիկ հիւանդութիւնը սաստկանում է քաղաքներում ապրող տեղացիների միջև։ Պաշտօնական հաշուով իւրաքանչիւր շաբաթ մեռնում են 35000։ Մահվան դէպքերի թիւը մեծանում է իւրաքանչիւր օր 1000 մարդով։ Շատ հաղարաւոր զոհերի մասին ամենևին զեկուցումներ չեն ստացվում, որովհետև հնդիկները ծածկում են նրանց, որովհետև իշխանութիւնների սանիտարական ձեռնարկութիւնների դէմ են գործում։

ԲԵՐԼԻՆ։ «Տէգլիգէ Ռունդշաուի» խօսքով, երևի աջողութեամբ կը պսակվեն եապօնական փխրութիւնը մասամբ գերմանական շուկայում զետեղելու բանակցութիւնները։

ԼՕՆԴՕՆ։ «Դէյլի Տելեգրաֆի» մէջ հրատարակված են հեռագիրներ Տօկիօից և Սինմինտինից, որոնց մէջ նկարագրվում են միջնադէպքեր Մուկդէնի ճակատամարտից։ Կուրոպատկինը ձիով ճանապարհ ընկաւ Տէլին. գլխաւոր շտաբը գնաց նոյն տեղը երկաթուղով։ Փետր. 20-ից սկսած նահանջումը կատարվում էր հիանալի կէլպով. վեց գնացք, բաղկացած 60-ական վագոնից, մեկնում էր իւրաքանչիւր ժամ, տանելով թնդանօթներ, ռազմամթերք և վիրաւորվածներին. սակայն գնացքների թիւը բաւարար չէր՝ ազատելու համար նոյն իսկ կէսը ուտեստի պաշարների։ Կազակները հրդեհեցին ամբարները, երկաթուղային պահեստը և տները։ Եապօնացիները քաղաք մտան հաւաւայն դռնից և վերականգնեցին կարգը։ Ընդհարումներից յետոյ, որոնց ժամանակ սպանվեցին մի քանի չինացիներ, գերի առնվեցին 4000 ռուսներ։ Այժմ քաղաքը հանգիստ է։ Հրդեհելով ռազմամթերքի և այլ ամբարները՝ ռուսական աջ թևի զօրքի մնացորդները շտապով նահանջեցին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ԶԵԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Դ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ՍԱՂՕԼՕՎ ատամնաբոյժ. 9—11 ժ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՀԵՐԲԻՆԻՆ—1½-2 ժ. մանեաբարձութեան և կանանց հ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Պ. Ա. ԱՐԳԱՋԻԱՆԻ. Կատարում է միկրո-քիմիական և բակտերիոլոգիական հետազօտութիւններ։
Օ. Ա. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։

Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Արտիստական ընկերութեան թատրոնում

Երկուշաբթի, մարտի 7-ին

Հայոց դրամատիրական ընկերութեան խումբը մասնակցութեամբ տիկ. Սիրանոյշի և պ. Պետրոսեանի կը ներկայացնէ

Դաւաճանութիւն

պատմական դրամա 5 գործ. հեղ. Սումբաթովի թարգմ. Զալալ Տէր-Գրիգորեանի։

Մասնակցում է ամբողջ խումբը։

Սկիզբն է ժամը 8-ին երեկոյեան։

Տեղերի գները սովորական են։

Հինգշաբթի, մարտի 10-ին կը ներկայացնէ ի նպաստ տ. Մայսուրեանի «Լօզա Բէրնդ»—Հաուպտմանի։

Հերթապահ անդամ վարչութեան՝
Ռ. Յովհաննիսեան
(շ. կ.) *Ռէժիսսեօր՝ Յ. Աբէլեան*

ԲԺՇԿԱՊԵՏ

Ս. Յ. ՔԱԹԱՆԵԱՆ

ներքին եւ ջղային հիւանդութիւններ։ *Ընդունելութիւնը ամեն օր առաւօտեան 9—12 ժամը և երեկոյեան 5—7 ժամը։* Веляминовская ул. домъ Сафарова № 13 рядомъ съ III гимназіей. *8—20*

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Ա. Ստեփանեան

Ընդունում է առաւօտեան 9—2 և 5—7, Վեւլեամինսկայա փ. № 8.

Բժիշկ Ա. Մխիթարեանց

Ընդունում է ամենաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. երեկոյեան 6—8 Մեծ Վանքի փողոց, տուն Կուղանովի, դեղատան կից։ (տ. օ.) *29—80*

Թ. ԻՍՊԻՐԵԱՆԻ

Ատաղձագործութեան (ստոլեար) արհեստանոցը Երևանից տեղափոխվել է Թիֆլիս, Միքայէլեան փող. № 156. ընդունում է ամեն տեսակ կահկարասիների, պողիեզդի, պատուհանների և փայտի վրա քանդակագործութեան պատուէրներ։ Օդէսայում կատարելագործված արհեստաւոր խնդրում է Թիֆլիսի և եկւոր յարգելի անձանց չը թողնել անուշադիր։ Պատրաստի կայ 2 հարուստ գրասեղան։
(շ. ե. հ.) *4—10*

Վաճառվում են
ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ
Երկու նոր ապխատարիւններ

I
ՄԷՐ ԵՒ ԽԱՆԴ (մի պատկերով) 20 կ.
II
ՆՆԱՌԱԿՈՒԹԻՒՆ և ՊՈՌՆԿՈՒԹԻՒՆ 20 »

Դիմել՝ Թիֆլիսում «Գուտտէնբէրգ» և «Կենտրոնական» գրավաճառանոցները, իսկ Բագուում՝ «Сотрудникъ» *գրավաճառանոցը։* *19—25*

Տպագրվում է եւ մայիսի վերջերին լոյս կը տեսնէ

ԼԷՕ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ (1878—1892), պատկերազարդ, մօտաւորապէս 600 երես։ Մինչև տպագրութեան վերջանալը շարունակվում է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ։ Երեք հատորը *անկազմ 3 բուբլի, ճանապարհածախսով 4 բուբլի. կազմած՝ 4 ր., ճանապարհածախսով 5 ր. 20 կ.։*

Տպագրութիւնից յետոյ գինը կը լինի (անկազմ) 4 ր. 50 կօպ. առանց ճանապարհածախսի։

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդագրութիւն ընդունվում է միմիայն «Գուտտենբերգ» գրավաճառանոցում։ Դրսից դիմում են՝ Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ». *5—10*

Լոյս է տեսել և վաճառվում է

ԽԱԾԱԿ

«ՀԱՐԿԵՐԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ»

Գինն է 40 կօպէկ

Դիմել Թիֆլիս—«Գուտտենբէրգ» գրախանութը։ Առնուազը 5 հատ ցանկացողը կարող է դիմել հեղինակին, «Մշակ»-ի խմբագրութիւն։

Գուտտենբերգ

Գրախանութում վաճառվում են հետևեալ հրատարակութիւնները.

1. *«Պատմուածքներ Թիւրքահայերի կեանքից», Վ. Փափազեանի, 378 երես, լաւ թղթի վրա տպված, գինն է 1 ր., ճանապարհածախսով 1—25 կօպէկ։*
2. *«Ազնիւ գող», վիպակ, Դաստաեվսկու, թարգմ. Ն. Զ. 32 երես, 10 կօպ. ճանապարհածախսով 12 կ.։*
3. *«Հաջի Բաբայի արկածները Պարսկաստանում», թարգմ. Մ. Կարապետեանի, 408 մեծադիր երես, գինն է 2 ր., ճանապարհածախսով 2 ր. 40 կօպէկ։*
4. *Բօբինզոն Կրուզօի ճանապարհորդութիւնը և զարմանալի արկածները», թարգմ. Մ. Թառայեանի. 286 մեծադիր երես, կազմած 1 ր. 25 կ., ճանապարհածախսով 1 ր. 50 կ.*

Նոյն տեղը վաճառվում են «Գուտտենբէրգի» հետևեալ հրատարակութիւնները.

1) *Պօմպէյի վերջին օրերը, Լօրդ Լիտտոնի, թարգմ. Յ. Միրզայեանի, 1 ր. 50 կ.*
2) *Ասպետ, Վ. Փափազեանի, 15 կ.*
3) *Կեանքը ծովերի խորքում, Լունկեվիչի, թարգմ. Ստ. Մալխասեանի, 30 կ.*
4) *Տրիլբի, դրամա 4 արար. թարգմ. Լ. Մէլիք-Ադամեանի, 25 կ.*
5) *Եաղ-ասա, վոդ. 2 արար. 2 պատկեր. Յակ. Ղազարեանի, 25 կ.*
6) *Դարվինիզմ, Ս. Բալաղեանի (Դարվինի պատկերով), 50 կ.*
7) *Ազնիւ գող, վիպակ, Ֆ. Մ. Դաստայեվսկու, թարգմ. Ն. Զ. 10 կ.*

Գումարով գնողներին զիջումով։ Գրախանութը վերադիր վճարով ուղարկում է միմիայն նրանց, որոնք ուղարկում են կանխավճար։

Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ», Г. Галустяну *1—3*

Նոր կոսմետիական միջոց.

«Դեղեցկութիւն ամենայն աղբիւր»

Источникъ красоты.

Делающее лицо свѣжимъ и чистымъ

Патент. в. Англіи.

Кремъ КАЗИМИ

Метаморфоза

противъ ВЕСНУШЕКЪ.

Доказательствомъ подлинности средства противъ веснушекъ служитъ подпись Cazimi и приложенный при каждой банкѣ рисунокъ „ИСТОЧНИКЪ КРАСОТЫ". Безъ подписи Cazimi и рисунка, утвержденнаго Департаментомъ Торгов. и мануфактур. за № 4383—

ПОДДѢЛКА.

Продается во всѣхъ аптекарск. парфюм. магаз. и аптекахъ.

2—10 17, 28, մ. 10, 20, 30 մ. 10, 20, 30, մ. 15 30

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

հեղինակութիւնները.

նոր տպագրութեամբ, ուղղած եւ լրացրած։

I **ՊԷՊՕ**

Կատակերգութիւն երեք արարուածով, երկրորդ տպագրութիւն։

Գինն է 50 կ.

II **ԽԱԹԱԲԱԼԱ**

Կատակերգութիւն չորս արարուածով, երկրորդ տպագրութիւն։

Գինն է 50 կ.

Վաճառվում են Թիֆլիսում՝ Կենտրոնական, Կովկասեան և «Գուտտենբէրգ» գրավաճառանոցներում, և Բագուում տիկին Մ. Սունդուկեանցի գրավաճառանոցում։ (չ.հ.շ.) *2—10*

Ս. Պետերբուրգի մեքենայական արդիւնաւործութեան ընկերութեան

ԱՄՈՒՐ, ՃԱՇԱԿՈՎ և ԹԵԹԵԻ, ԿԱՆԱՆՑ, ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ և ԵՐԵԽԱՆԵՐԻ

ԿՕՇԻԿՆԵՐ,

Նոյնպէս և սկօրօխօդներ ու սանդալներ կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդրկովկասի միւս քաղաքներում ԱՄԵՆԱԼԱՒ վաճառատներում։

ФАБРИЧНОЕ КЛЕЙМО

С.ПЕТЕРБУРГЪ.

Խնդրվում է ուշք դարձնել ֆաբրիկայի նշանի վրա։

„ԼԷՕՊՕԼԴ ՆԷՅՇԵԼԷՐ"

Առևտրական տան պահեստում կայ ընտրութեան համար մեծ քանակութեամբ ռուսական եւ արտասահմանեան արդիւնաւործութեան

ԿԱԶՈՒԵՂԷՆԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ

Տէլէֆոն № 346. 80—36 Երևանեան հրապարակի վրա։

Позволено цензурою. Тифлисъ, 4-го Марта 1905 г. Գպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ. Электропечатня типографскаго Т—ва „Гермесъ". Мад. ул. № 15